

Զանգասկ



3

« Ունիսոն »
հասարակական կազմակերպության
տեղեկագիր
2005թ. դեկտեմբեր



Լուսանկարները՝ Կարեն Միլասյանի

Սիրելի ընթերցող

Ավարտին է մոտեցել 2005 թվականը: Ինչպիսի՞ն էր այն մեզ համար, ի՞նչ ենք արել և ի՞նչ արդյունքների հասել: Համառոտ ներկայացնենք տարվա ընթացքում կատարված աշխատանքները:

Փետրվար-մարտ ամիսներին «Ունիսոնը» անցկացրել է Հաշմանդամ կանանց գեղեցկության 2-րդ հանրապետական ֆոտոմրցույթը, որին զուգընթաց անցկացվել է նաև Հաշմանդամ ստեղծագործողների 1-ին հանրապետական մրցույթը: Երկու մրցանակաբաշխությունների հանդիսավոր արարողությունը և լավագույն աշխատանքների ցուցահանդեսը տեղի են ունեցել ապրիլի 6-ին «Նարեկացի» արվեստի միության դահլիճում:

Մայիսից ԱՄՆ Պետդեպարտամենտի Հասարակական հարաբերությունների բաժնի աջակցությամբ «Ունիսոնը» իրականացրել է դրամաշնորհային ծրագիր, որի շրջանակներում տպագրվել են «Չանգակ» տեղեկագրի երեք համարները, թողարկվել է հեռուստատեսությամբ ցուցադրվել 6 տեսահոլովակներ, պատրաստվել է լազերային սկավառակ: Ձեռնարկվել են նաև հաշմանդամների իրավունքների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման ուղղված մի շարք այլ ակցիաներ:

Հունիս-դեկտեմբեր ամիսներին Համաշխարհային Բանկի և Բաց Հասարակության Ինստիտուտի աջակցությամբ «Ունիսոնը» իրականացրել է «Մատչելի միջավայր հաշմանդամների համար» ծրագիրը, որը, մասնավորաբար, ընդգրկել է Երևանում գործող շուրջ 200 կրթական, մշակութային, սպասարկման և այլ հաստատությունների մատչելիության մոնիտորինգ: Հետազոտությունը իրականացրել են սայլակավոր հաշմանդամների 4 խմբեր, ինչը նաև մեծ դաստիարակչական նշանակություն ունեցավ: Մոնիտորինգի արդյունքներով «Երևան՝ քաղաք բոլորի համար» խորագրով առաջին անգամ Հայաստանում տպագրվեց սակավաշարժ մարդկանց համար մատչելիության ուղեցույցը:

Հունիսի 11-ին Կոմիտաս Վարդապետի վեր-կայքը (www.komitas.am), որը Բաց Հասարակության Ինստիտուտի աջակցությամբ ստեղծել էր «Ունիսոնը», արժանացավ «Մաշտոց 1600» մրցույթի գլխավոր մրցանակին:

Հունիսից Եվրասիա Հիմնադրամի աջակցությամբ «Ունիսոնը» իրականացնում է «Քաղաքացիական հասարակություն՝ իրավունք բոլորի համար» ծրագիրը, որի արդյունքում, հուսով ենք, օրենքի ուժ կստանա մեր կողմից մշակած և բազմաթիվ այլ կազմակերպությունների հավանությանն արժանացած «Հաշմանդամների և սակավաշարժ այլ անձանց համար հասարակական նշանակության վայրերի և հասարակական տրանսպորտի մատչելիության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նոյեմբերին «Ունիսոնի» պատվիրակությունը Հայաստանը ներկայացրեց Բորդոյում կայացած հաշմանդամների միջազգային համաժողովին՝ դառնալով «Խորհրդարան առանց սահմանների» միջազգային իրավապաշտպան Նորաստեղծ կառույցի հիմնադիրներից մեկը:

Դեկտեմբերի 3-ին Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ հաշմանդամների հիմնահարցերի գործում դրսևորած արդյունավետ աշխատանքի համար, մի շարք այլ ՀՀ-ների հետ միասին «Ունիսոնը» պարգևատրվեց ՀՀ Ազգային Ժողովի նախագահի շնորհակալագրով: «Ունիսոնը» նաև ակտիվորեն մասնակցեց «Օրինաց երկիր» կուսակցության «Իսահակյան» մշակութային կենտրոնի, Հայկական Կարմիր Խաչի ընկերության և Միջազգային հետվնասվածքային վերականգնողական կենտրոնի կողմից կազմակերպած Հաշմանդամների համահայկական փառատոնին: Դեկտեմբերի 9-ին Օպերայի և բալետի պետական թատրոնում կայացավ փառատոնի եզրափակիչ համերգը և մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը: «Ունիսոնը» ճանաչվեց հաշմանդամների հիմնախնդիրներով զբաղվող լավագույն հասարակական կազմակերպություն և պարգևատրվեց պատվոգրով, իսկ մեր ՀՀ-ն ներկայացնող երեք հաշմանդամներ հաղթեցին ջութակի, կիթառի և գեղարվեստի անվանակարգերում: Համերգին հանդես եկան մի շարք ծանաչված կատարողներ և կոլեկտիվներ, որոնց թվում էին Ռուբեն Մաթևոսյանը, Նահրուհի Ալավերդյանը, Լեյլա Սարիբեկյանը, Անդրեյ, Հայաստանի պետական ակադեմիական կապելան... Երկու երգի կատարմամբ իր մասնակցությունը բերեց նաև «Փարոս» կամերային երգչախումբը (գեղարվեստա-



կան դեկավար՝ Վ.Նավասարդյան): Ի դեպ, այս տարի «Փարոսը» ծավալել էր բուռն համերգային գործունեություն: Հատկանշական են, մասնավորաբար, նոյեմբերին կայացած՝ երգչախմբի հյուրախաղերը Ֆրանսիայում: 25-հոգանոց պատվիրակության կազմում ընդգրկված էին 17 հաշմանդամներ, որոնք հայ արվեստը ֆրանսիացի հանդիսատեսին ներկայացնելուց բացի ստացան Փարիզի և Բորդոյի հրաշալիքներին ծանոթանալու եզակի հնարավորություն: «Կախման կետեր» հեռուստաշարի ստեղծագործական խմբի կողմից նկարահանված՝ հյուրախաղերի մասին պատմող տեսաֆիլմը 3 անգամ ցուցադրվեց Հայկական 2-րդ հեռուստաալիքի եթերում:

Ձեռքբերումները շատ են: Կարող ենք, ուրեմն, հպարտանալ դրանցով և բավարարվել անցած տարվա արդյունքներով: Ո՛չ: Մենք չենք կարող գոհ և բավարարված լինել, քանզի Հայաստանում բնակվող հազարավոր հաշմանդամներ շարունակում են գոյատևել ողորմելի 4800-դրամ թոշակով, քանզի սայլակավոր հաշմանդամների ճշդ մեծամասնությունը շարունակում է իր կյանքն անցկացնել բնակարանի 4 պատերում՝ չունենալով սովորելու, աշխատելու, մշակութային օջախեր և սպորտային հաստատություններ հաճախելու հնարավորություն, քանզի լուծված չեն բժշկական սպասարկման և այլ բազմաթիվ հիմնախնդիրներ... Ուրեմն զինվեց համերգությամբ և շարունակենք պայքարել մեր իրավունքների լիակատար իրականացման համար, որ հնարավոր կդառնա միայն ողջ հասարակության ակտիվ մասնակցության և աջակցության դեպքում:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ



Փարիզյան հայտնի «Gare Montparnasse» կայարանից դեպի Ֆրանսիայի այլ քաղաքներ են ուղևորվում նորաճ արագընթաց գնացքները, որոնց արտաքին տեսքը հիշեցնում է մի հսկա օձի մարմին: Այս «օձերից» մեկը մեզ պետք է տեղափոխեր Փարիզից Բորդո՝ 3,5 ժամում:

Մենք անսովոր էինք նման ահռելի արագության, այդ պատճառով բոլորիս ականջները ժամանակավորապես խլացան, երբ գնացքը հավաքեց իր մաքսիմալ արագությունը: Այնպիսի տարօրինակ զգացում էր՝ ասես տիեզերքում ես սավառում, բոլոր

հողեղեն պայմանականություններից դուրս: Ականջները վերադառնում էին իրենց բնական ֆունկցիային միայն կանգառների ժամանակ, երբ դա այդքան էլ կարևոր չէր, որովհետև բոլորիս հայացքներն ուղղվում էին ցուցանակներին, ուր գրված էին այն շրջանների անունները, որոնց մոտով մենք անցնում էինք՝ Տուր, Պետյե, Անգուլեմ, Լիբուրն, վերջապես՝ Բորդո: Ուրախանալով ականջների տառապանքների ավարտի համար, իջանք և մեծ հայրենասիրական հպարտությամբ բոլորս պարտաճանաչորեն նշեցինք ծխախոտի մնացորդների ծավալուն խրճի առկայությունը կառամատույցում: Այո, մենք չենք աշխարհի ամենամաքրասեր ազգը:

Մենք սովոր ենք մեր հայրենի բնության հատկանիշներից բխող «ուսկե աշուն» գեղարվեստական արտահայտությանը: Անմիջապես նշենք, որ նման բառակապակցություն Բորդոյի բնության նկարագրին հնարավոր չէ կիրառել՝ Բորդոյի աշունը մուգ-կարմիր է (ո՞վ գիտե, գուցե հենց այս հանգամանքն էլ քաղաքի անվանման հիմքն է դարձել): Սա կարելի է բացատրել կլիմայի խոնավության մակարդակի բարձրությամբ՝ տերևները հագեցած են ջրով և չեն այրվում ու չորանում արևից, այլ ենթարկվելով ժամանակի պահանջներին կարմրում են:

Մերինյակ կոչված փոքրիկ քաղաքում, որ բավական մոտ էր Բորդոյին, հոկտեմբերի 12-14 «A Hauteur

D'Homme» կազմակերպությունը անցկացնում էր միջազգային համաժողով «Vivre sans Frontieres» («Այրել առանց սահմանների») խորագրով: Այդ օրերին Մերինյակի նորակառույց «Maison des Associations» սրահում հավաքվել էին աշխարհի 40 երկրներից ժամանած՝ հաշմանդամության խնդիրներով զբաղվող 34-ների շուրջ 125 ներկայացուցիչներ: Այստեղ կարելի էր տեսնել նույնիսկ ամենաեկզոտիկ աշխարհամասերից եկած հյուրերի՝ Թունիս, Զամբոջա, Կոտ-Դիվուար, Մարոկո, Կոլումբիա, Կիպրոս, Մավրիտանիա, Լիբերիա և այլն: Ուրախալի էր այն փաստը, որ ամենամեծ պատվիրակությունը Յայաստանն էր ներկայացնում՝ ի դեմ «Ունիտն» 34-ի և «Փարոս» կամերային երգչախմբի:

Համաժողովի մասնակիցները խոսեցին իրենց երկրներում հաշմանդամների նկատմամբ խտրականությանն առնչվող բազմաթիվ հարցերի շուրջ: Համատեղ քննարկման և փորձի փոխանակման ընթացքում հետզհետե ավելի ակնհայտ էր դառնում, որ այդ խնդիրները բոլոր ազգերի և հավատքների ներկայացուցիչների համար նույնն են: Այսպիսով, «A Hauteur D'Homme» կազմակերպության ղեկավար Բերնար Ֆրոչիի նպատակը՝ ստեղծել հաշմանդամների միջազգային խորհրդարան, որտեղ բոլորը հնարավորություն կունենան արտահայտվել և իրենց հուզող հարցերի բազմակողմանի մեկնաբանություն և լուծում ստանալ, լիովին իրագործվեց:

Իսկական միջազգային երաժշտական փառատոն դարձավ «Du Pin Galant» սրահում կազմակերպած համերգը, որտեղ ներկայացվեց մասնակից երկրների ազգային արվեստը՝ ոճական և ժանրային վառ առանձնահատկություններով: Այստեղ էին «Roll Dance» պարային համույթը Հունգարիայից, «Gestim» վոկալ-պարային խումբը Բուլղարիայից, Օրիենտալ երգի և պարի անսամբլը՝ արևելյան երաժշտության իր յուրօրինակ նմուշներով: Շատ արտասովոր և հետաքրքիր էր պատկերացնել մեր սեփական ձայները այսպիսի երփներանգ երաժշտական խճանկարի մեջ՝ նույն հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները կարծես աշխարհի մի այլ, շատ հեռավոր ազգային մշակույթի ինքնատիպ նմուշներ լինեին: Անշուշտ, հենց այդպիսի տպավորության տակ էր միջազգային համաժողովի բազմազգ լսարանը, երբ դահլիճը լցվեց մեր քառաձայն համահնչյունների արձագանքով: Երգեցողության ընթացքում սրահում տիրող անխախտ լռությունը վկայում էր մեծ ինֆորմացիոն և էներգետիկ լիցքի մասին, որով մեր արվեստը լրացրեց յուրաքանչյուր ունկնդրի պատկերացումը: Առնվազն աշխարհի ևս 100 մարդ հաղորդակից դարձավ հայ երգչախմբային մշակույթին, ուրեմն՝ առաքելությունն իրականացված է...

Լուսինե Մելքումյան
Երևան-Փարիզ-Բորդո-Երևան

ԵՐՋԱՆԿ ԼԻՆԵՆՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ...



Ըստ վիճակագրության մոլորակի յուրաքանչյուր 10-րդ մարդը հաշմանդամ է: Կարևոր չէ՝ հաշմանդամությունը բնածին է, թե՛ ձեռք է բերվել հետագայում, կարևորը ցանկացած ճգնաժամային իրավիճակում հիմնախնդրի լուծման ճիշտ տարբերակ գտնելն է:

Հաշմանդամությունն ուղեկցվում է անձնական և հասարակական հարաբերությունների հետ կապված խնդիրներով, որոնցից ամենակարևորն այն է, թե ինչպես են հասարակության կողմից ընկալվում և գնահատվում հատուկ կարիքներով անձանց մարդկային ձեռքբերումները, հոգևոր արժեքները, և, առհասարակ, ինչպիսի վերաբերմունք է հասարակությունը ցուցաբերում նրանց նկատմամբ: Մեկ այլ խնդիր է նաև հաշմանդամի՝ հասարակության մեջ ժամանակին հարմարվելն ու ճիշտ կողմնորոշվելը: Այս նպատակին՝ ինտեգրացիային հասնելու համար անհրաժեշտ է հասարակական զբաղվածություն, զգացմունքների հավասարակշռվածություն, իրականության ռեալ գիտակցում և միջանձնային ներդաշնակ հարաբերությունների կարգավորում: Ինտեգրման խնդրում այս գործոնների իրականացումը պարտադիր է:

1982թ. ՄԱԿ-ը դեկտեմբերի 3-ը հռչակեց Հաշմանդամների միջազգային օր: Այդ շրջանակներում օրերս Յայաստանում անցկացվեցին մի շարք միջոցառումներ, որոնց թվում՝ դեկտեմբերի 2-ին Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում տեղի ունեցավ «Փրկություն» 34-ի՝ մտավոր արատներ ունեցող երեխաների ցերեկային առօրյա կենտրոնի բարեգործական համերգը:

Այս ուրախ միջոցառումը հիրավի տոն դարձավ հատուկ կարիքներով երեխաների համար՝ թատրոնի դահլիճը լեփ-լեցուն էր հանդիսատեսներով: Համերգին մասնակցեցին հայ էստրադայի աստղեր՝ Սոֆի Դևոյանի ղեկավարած պարի համույթը, «Սիրող սրտեր» ակումբի նախագահ «Ժպիտ Գարիկը», կամ Գարիկ Իսրայելյանը, Արմինե Նահապետյանը, Լեյլա Սարիբեկյանը, Դավիթ Ամալյանը, Ազատ Աբրահամյանը, Անժելա Արզումանյանը, «Հայասա» պարի համույթը, ինչպես նաև «Օվացիա» պրոդյուսերական կենտրոնը: Համերգի ամենագրավիչ և հուզական համարներից էր «Փրկություն» 34-ի ցերեկային կենտրոնի մտավոր արատ ունեցող երեխաների ելույթը: Նրանք հանդես եկան մի հետաքրքիր ու գողտրիկ բեմականացմամբ և ապացուցեցին, որ իրենց խնդիրներով հանդերձ՝ կարող են մեծ հիացմունք պատճառել հանդիսատեսին:

Միջոցառման ընթացքում «Փրկություն» 34-ի նախագահ Արմինե Աբրահամյանը հակիրճ ներկայացրեց կենտրոնի աշխատանքները: Նա նաև տեղեկացրեց, որ «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնում վերջերս բացվել է բարեգործական ատամնաբուժարան, որն անվճար սպասարկում է ոչ միայն կենտրոնի սաներին և նրանց ընտանիքների անդամներին, այլև Շենգավիթ համայնքի Սոցիալական



ծառայությունում հաշվառված նպաստառու ընտանիքներին:

Համերգը ծառայեց իր նպատակին՝ երեխաները պարում էին դահլիճում, ձերբազատված բոլոր բարդույթներից, ուրախ ձայնակցում էին ելույթ ունեցողներին: Թե նրանք, թե նրանց հարազատներն ու դահլիճում գտնվող տասնյակ հյուրերը մեծ բավականություն ստացան: Դրսում ձմեռ էր, մինչդեռ երեխաների ուրախությունն ու հրճվանքը ջերմացրել էին մթնոլորտը: Այդ մթնոլորտում կարծես կերպարանափոխվեցին նաև ս.թ. հունիսին բացված 1-ին պսիխոտիկ էպիզոդի կլինիկայի հիվանդները՝ մարդիկ, որոնք տարբերվում էին իրենց ինքնամոտրոսությամբ: Նրանց ուրախությունն էլ գունարվեց համընդհանուր տրամադրությանը: Եվ ոչ ոք չէր հիշում, որ դահլիճում հաշմանդամներ են՝ լեցուն ամենօրյա խնդիրներով և հոգսերով: Արվեստն ու տոնը միացրել էր բոլորին: Տա Աստված, որ այդպես լինի ամենուր և միշտ:

Ռուզաննա Չոհրաբյան

ԱՆԱՐԳԵԼ ՄԻՋԱՎԱՅՐ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ



Սույն թվականի դեկտեմբերի 1-ին «Արմենիա Մերիոթ» հյուրանոցում Համաշխարհային Բանկի և Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղի աջակցությամբ իրականացվող «Մատչելի միջավայր հաշմանդամների համար», ինչպես նաև Եվրասիա Հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Քաղաքացիական հասարակություն՝ իրավունք բոլորի համար» ծրագրերի շրջանակներում «Անարգել միջավայր բոլորի համար» խորագրով «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը անցկացրեց Հաշմանդամների միջազգային օրվան նվիրված կոնֆերանս: Այս միջոցառմանը մասնակցեցին ինչպես Երևանում գործող, այդպես էլ Հայաստանի բոլոր մարզերից ժամանած շահագրգիռ պետական կառույցների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կոնֆերանսին արժարժվող հարցերի քննարկմանը ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև ՀՀ Կապի և տրանսպորտի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները, Աժ պատգամավոր Գագիկ Ավետյանը և Աժ նախագահին կից Հաշմանդամության խորհրդի անդամները: Ցավոք սրտի, միջոցառմանը չէին ներկայացել ՀՀ Քաղաքաշինության նախարարության և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները:

Կոնֆերանսի ընթացքում մասնակիցները քննարկեցին «Ունիսոն» ՀԿ-ի մշակած «Հաշմանդամների և սակավաշարժ այլ անձանց համար հասարակական նշանակության վայրերի և հասարակական տրանսպորտի մատչելիության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Բոլորն քննարկումների արդյունքում մշակվեց օրինագծի բարեփոխված տարբերակը:

Կոնֆերանսի մասնակիցներն ընդունեցին ուղերձ ՀՀ Ազգային ժողովին և Կառավարությանը, որտեղ, մասնավորապես, ասված է.

«Ելնելով այն համոզմունքից, որ առկա իրավիճակի արմատական բարելավումը հաշմանդամների իրավունքների իրականացման և հասարակությունում նրանց ինտեգրման,

ինչպես նաև սոցիալական կարգավիճակի բարձրացման անհրաժեշտ նախապայման է, Գիտակցելով այն հանգամանքը, որ անարգել միջավայրի ապահովումը այս իրավիճակի բարելավման առաջնահերթ գործոն է, Առաջնորդվելով մարդու իրավունքների վերաբերյալ հանրաճանաչ միջազգային փաստաթղթերով և ՀՀ բարեփոխված Սահմանադրության 14.1 հոդվածով և 48-րդ հոդվածի 7-րդ կետով,

Համոզված լինելով, որ անարգել միջավայրի ապահովումը պայմանավորված է համապատասխան օրենսդրության ու դրա իրականացման գործուն մեխանիզմների առկայությամբ,

մենք՝ հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչներս, դիմում ենք Հայաստանի Հանրապետության Կառավարությանը և Ազգային ժողովին հետևյալ միջնորդությամբ.

շուտափույթ անցկացնել «Հաշմանդամների և սակավաշարժ այլ անձանց համար հասարակական նշանակության վայրերի և հասարակական տրանսպորտի մատչելիության ապահովման մասին» ՀՀ օրենքի և դրան առնչվող օրենքների առաջարկվող նախագծերի քննարկումը և ընդունել համապատասխան օրենսդրական փաթեթը»:

Ուղերձը և օրինագծի բարեփոխված տարբերակը ներկայացվեց դեկտեմբերի 3-ին կայացած Աժ նախագահին կից Հաշմանդամության խորհրդի նիստի մասնակիցներին: Ձերմորեն ողջունելով այս նախաձեռնությունը՝ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը դրական գնահատեց մշակված օրինագիծը և հանձնարարական տվեց Աժ Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Մխչյանին՝ համապատասխան լրամշակումներ կատարելուց հետո շրջանառության մեջ դնել օրենքի նախագիծը:

Դեկտեմբերի 1-ին կայացած կոնֆերանսի կարևոր իրադարձություններից էր նաև «Ունիսոն» ՀԿ-ի կողմից իրատարակած, նախադեպը չունեցող

«Երևան՝ քաղաք բոլորի համար»՝ սակավաշարժ մարդկանց համար մատչելիության ուղեցույցի շնորհանդեսը: Այս հրապարակումը հիմնված է մայրաքաղաքի կենտրոնում գտնվող շուրջ 200 թանգարանների, համերգասրահների, ռեստորանների, հյուրանոցների, խանութների և այլ հաստատությունների մոնիտորինգի արդյունքների վրա: Այստեղ ներառված բոլոր վայրերն ըստ նրանց մատչելիության աստիճանի պայմանականորեն բաժանված են 4 ենթախմբի (համապատասխանաբար նշված 4 գույնով)՝ մատչելի վայրեր, որտեղ անվասայլակ օգտագործողը կարող է մուտք գործել առանց կողմնակի օգնության (սայլակի կանաչ նշան), մասնակիորեն մատչելի վայրեր, որտեղ մուտք գործելու համար սայլակավոր հաշմանդամին անհրաժեշտ է որոշակի օգնություն (սայլակի կապույտ նշան), դժվարամատչելի վայրեր, որտեղ մուտք գործելը հնարավոր է միայն վարձ ուղեկցողի օգնությամբ (սայլակի դեղին նշան) և անմատչելի վայրեր, որտեղ չափազանց շատ են մուտք գործելու խոչընդոտները (սայլակի կարմիր նշան): Բացի նշաններից, յուրաքանչյուր հաստատության անվանման մոտ տրված է մանրամասն բացատրություն առկա խոչընդոտների և նրանց հաղթահարման վերաբերյալ: Գրքում գետեղված են նաև որոշ մատչելի վայրերի մուտքերի լուսանկարները: Հայրեն և անգլերեն լեզուներով տպագրված ուղեցույցն անվճար տրամադրվելու է Երևանում բնակվող սայլակավոր հաշմանդամներին և նրանց ընտանիքներին, հասարակական կազմակերպություններին, շահագրգիռ պետական մարմիններին, ինչպես նաև տուրիստական գործակալություններին, հյուրանոցներին և այլն:

Կոնֆերանսի մասնակիցները միաձայն ընդունեցին նաև դիմում «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ գլխավոր մենեջեր Խուան Պարելո Գեչիջյանին՝ «Ձվարթնոց» միջազգային օդանավակայանը սայլակավոր հաշմանդամների համար մատչելի դարձնելու, ինչպես նաև նոր տերմինալի կառուցման ժամանակ բոլոր միջազգային չափանիշները հաշվի առնելու առաջարկով:

Կյանքը շարունակվում է



Լուսանկարները Գերման Ավագյանի

Նարաբաղյան պատերազմն ավարտվել է, սակայն շարունակվում են նրա ավերիչ հետևանքները: Պատերազմի ընթացքում ականապատված տարածքներում մինչև այժմ էլ հայտնաբերվում են մեծաթիվ չպայթած զինամթերք և սկաններ, որոնք վտանգ են ներկայացնում բնակչության համար: 1993-ից մինչ օրս զինամթերքի պայթյուններից ավելի քան հազար մարդ է զոհվել: Չոհերի մեկ երրորդը մինչև 20 տարեկան երեխաներ և պատանիներ են:

Ցավոք դժբախտ պատահարները տարբեր էլքերով, դեռ շարունակվում են: Նման պատահարի զոհ է նաև կապանցի 20-ամյա Մերի Մեծլումյանը: 1993 թվականին Մերին զրկվել է ձեռքերից և ոտքից: «Այդ օրը ես երբեք չեմ մոռանա,- պատմում է Մերին,- հուլիսի 24-ն էր, հայրիկիս ծննդյան օրը»: Ընտանիքը հոր ծնունդը որոշում է բացօթյա նշել՝ աղբյուրի մոտ, որտեղ և տեղի է ունենում դժբախտ պատահարը: «Կռացա որ աղբյուրից ջուր խմեմ, հենց այդ պահին էլ պայթյունը տեղի ունեցավ,- վերհիշում է Մերին,- ես որ աղբյուրի մոտ չլինեի ինձ ոչինչ չէր պատահի: Պայթյունից ուշաթափվել էի՝ ընկել աղբյուրի վրա, հետո սառը ջրից ուշքի եկա, ուզեցի ձեռքերով գետնին հենվելով բարձրանալ՝ զգացի ձեռքերս չկան, հալվել էին»:

Երկար ժամանակ Մերին տանից գրեթե դուրս չէր գալիս: Աղջկան թեև անհրաժեշտ պրոթեզավորում արվել էր, սակայն առաջին պրոթեզներին նա հրաժեշտ է տվել դեռևս 2000-ին: Չեռագայում աղջկա ծնողները հնարավորություն չեն ունեցել՝ երեխայի աճին զուգընթաց պրոթեզավորում անել: Անցյալ տարի, երբ Կապանում հանդիպեցինք Մերին, նա թեև աշխատում էր ընկճվածությունը ցույց չտալ, սակայն զգացվում էր, որ աղջիկը տանից հագվադեպ է դուրս գալիս, հասակակիցների հետ քիչ է շփվում, և անընդհատ խոսում էր այն մասին, որ ուզում է Չայաստանից գնալ: Մեկ անգամ արդեն Մերին եղել էր արտերկրում՝ բարերարների միջոցով ԱՄՆ ուղևորված Մերին այնտեղ պետք է համապատասխան բուժում ստանար, սակայն այդ ժամանակ ընտանիքը երկրորդ կորուստն է ունենում, ինչը խանգարում է Մերիի բուժմանը: Նահանգներում Մերին բուժումը կիսատ է թողնում և վերադառնում Չայրենիք՝ վերջին հրաժեշտը տալու մահամերձ մորը: Այդ օրվանից Մերին տան էր: Ինքն իր վիճակի ծանրությունը զգալով՝ անընդհատ էլք է փնտրում դրանից դուրս գալու և լիարժեք կյանքով ապրելու: Այդ ցանկությունն է հավանաբար նրան հնարավոր դարձրել: Եվ աղջիկը այնպիսի

ճկունություն է ձեռք բերել, որ զարմանք է հարուցում: Առանց ձեռքերի աղջիկը կարողանում է կենցաղային բազմաթիվ գործողություններ կատարել՝ անվաս մնացած մեկ ոտքի օգնությամբ խոզանակում է ատամները: Նույնքան հմուտությամբ՝ նա սուրճ եփեց մեզ համար: Նախ բերանով բռնեց գդալը, սուրճն ու շաքարավազը լցրեց սրճեփի մեջ, հետո սրճեփը բերանով բռնելով՝ գազօջախին դրեց, և բերանի ու ոտքի օգնությամբ վառեց լուցկին ու գազօջախը: Չեռ պրոթեզի վրա կանգնած՝ առողջ ոտքը գազօջախի պտուտակին, որ անհրաժեշտ պահին կրակը մարի, իսկ բերանով գդալը բռնած՝ սուրճն էր խառնում: Աղջիկը բերանով հրաշալի նկարում էր նաև: Ինքը հրճվանքով այդ ամենը ցույց էր տալիս ու մեզ հույս ներշնչում: Չավանաբար նույն հույսը և իր մեջ կար: Մեկ տարի անց, երբ Մերին հանդիպեցինք, աղջիկը բավականին փոխվել էր: Արտասահման գնալու մասին էլ չէր երազում: Չգացվում էր, որ աղջիկը նախորդ տարվա համեմատ բավականին լավ է զգում իրեն: Չավանաբար այդ փոփոխությունը տեղի էր ունեցել այն բանից հետո, երբ իր հանդեպ ուշադրությունից բացի, զգացել էր նաև, որ կյանքը հաշմանդամությամբ չի ավարտվում, ինքն էլ կարող է բոլորի նման ապրել: Ուղղակի եթե բոլորը գործի են դնում ձեռքերը, ինքը գործի կդնի իր հնարամտությունն ու խելքը և պակաս արդյունքի չի հասնի: Չիմա Մերին ուսանող է, սովորում է Կապանի պոլիտեխնիկ ինստիտուտում: Նա հաշվապահ կդառնա: Սիրով է հաճախում դասերին: Սի քիչ ձանձորանում է դասերի ընթացքում, որովհետև մինչ դասընկերները գրիչն են գործի դնում, ինքը ստիպված պարապ նստում ու ձայնագրում է դասախոսությունները: Սակայն հասակակիցների հետ շփումն ավելի կենտրոնախ է դարձրել նրան: Դասընկերուհիների հետ արդեն իրենց փոքրիկ գաղտնիքներն ունեն, միասին հաճելի ժամանակ են անցկացնում, դիսկոտեյ են հաճախում: Կյանքը շարունակվում է...

Նառա Ավետյան

Կոնտակտ տեղեկություններ.
«Ունիսոն» հասարակական կազմակերպություն
 Հասցե՝ Երևան, Դեմիրճյան 36
 Հեռ.՝ 52-21-70
 Ֆաքս՝ 22-64-70
 Վեբ-կայք՝ www.unison.am
 Էլ. փոստ՝ unison@unison.am

Այս համարը պատրաստել են՝ Արմեն Ավետրոյանը, Գերման Ավագյանը, Լուսինե Մելքունյանը, Գայանե Փայտյանը, Նառա Ավետյանը

This project was funded through a Department of State Public Affairs Section grant, and the opinions, findings and conclusions or recommendations expressed herein are those of the Author(s) and do not necessarily reflect those of the Department of State

Սույն նախագիծը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետության հարաբերությունների բաժնի տրամադրված դրամաշնորհի շրջանակներում: Այս հրապարակման մեջ արտահայտված կարծիքները եզրակացությունները կամ հանձնարարականները հեղինակային են և անպայման չէ, որ արտացոլեն ԱՄՆ Պետության հարաբերությունների տեսակետները: